

**СБОРНИК СТАТЕЙ  
МЕЖДУНАРОДНОЙ НАУЧНОЙ  
КОНФЕРЕНЦИИ,  
ПОСВЯЩЕННОЙ 500-ЛЕТИЮ  
АРМЯНСКОГО КНИГОПЕЧАТАНИЯ  
И 65-ЛЕТИЮ ОСНОВАНИЯ СНО ЕГУ**

**3**

*Гуманитарные науки*  
(Юриспруденция, журналистика)

ЕРЕВАН  
ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ  
2013

**ՀԱՅ ԳՐԱՏՊՈՒԹՅԱՆ 500-ԱՄՅԱԿԻՆ  
ԵՎ ԵՊՅ ՈՒԳԸ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ  
65-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ  
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ  
ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ**

**3**

*Հասարակական գիտություններ*  
(Իրավագիտություն, ժուռնալիստիկա)

ՀՏԴ 30  
ԳՄԴ 60  
Հ 240

Հրատարակվում է  
ԵՊՀ գիտական խորհրդի որոշմամբ  
Издается по решению Ученого совета ЕГУ

Ժողովածուն տպագրվում է  
Հայաստանի երիտասարդական հիմնադրամի  
աջակցությամբ

Խմբագրական խորհուրդ՝

Ի. Գ. Դ., պրոֆ. Ա. Հայկյանց  
Բ. Գ. Դ., պրոֆ. Ռ. Պետրոսյան  
Բ. Գ. Դ., պրոֆ. Լ. Ալոյան  
Բ. Գ. Դ., պրոֆ. Մ. Հովսեփյան  
Ի. Գ. Ք., դոց. Ս. Առաքելյան  
Բ. Գ. Ք., դոց. Ա. Մենենձյան  
Բ. Գ. Ք. Լ. Սայադյան

Редакционная коллегия՝

Ժ. Յ. Ն., проф. А. Айкянц  
Ժ. Ֆ. Ն., проф. Д. Петросян  
Ժ. Ֆ. Ն., проф. Л. Алоян  
Ժ. Ֆ. Ն., проф. М. Овсепян  
Կ. Յ. Ն., доц. С. Аракелян  
Կ. Ֆ. Ն., доц. А. Менемшян  
Կ. Ֆ. Ն. Л. Сайадян

Հ 240 Հայ գրատպության 500-ամյակին և ԵՊՀ ՈՒԳԸ հիմնադրման 65-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի հոդվածների ժողովածու: Հատոր 3: Հասարակական գիտություններ: Իրավագիտություն, ժուռնալիստիկա / ԵՊՀ; Ուսանողական գիտական խորհուրդ: Խմբ. խորհուրդ.- Եր., ԵՊՀ, 2013.- 352 էջ:

Сборник статей международной научной конференции, посвященной 500-летию армянского книгопечатания и 65-летию основания СНО ЕГУ. Том 3. Гуманитарные науки: юриспруденция, журналистика. – Ереван. Изд. ЕГУ, 2013. - 352 с.

ՀՏԴ 30  
ԳՄԴ 60

ISBN 978-5-8084-1749-6

© Հեղինակային խումբ, 2013  
© ԵՊՀ Ուսանողական գիտական ընկերություն, 2013  
© ԵՊՀ հրատարակչություն, 2013

## **ԿՅԱՆՔԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԾԱԳՄԱՆ ՊԱՅՆ ԵՎ ՍԱՐԴԿԱՅԻՆ ՊՏՂԻ (ԷՄԲՐԻՈՆԻ) ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ**

1972 թ. ամերիկացի կենսաբան Վ. Պոտտերը շրջանառության մեջ դրեց «բիոէթիկա» եզրույթը: Դրա տակ հասկացվում էր նոր գիտական կատեգորիա, որը միավորում է կենսաբանական գիտելիքներն ու մարդկային արժեքները: Ի սկզբանե այս գիտության ուսումնասիրման առարկան էին կազմում այնպիսի խնդիրներ, որոնք կապված էին հղիության արհեստական ընդհատման, էֆթանագիայի, սեռական հարաբերությունների, բուժսպասարկման, օրգանների և հյուսվածքների փոխպատվաստման հետ: Հետագայում այդ խնդիրների շրջանակը լայնացվեց և դրանում ընդգրկվեցին հետևյալ կատեգորիաները.

1. կենսաբանական էության և անձի իրավաբանական կարգավիճակի փոխհարաբերակցությունը,
2. իրավական հարցերի լուծման մեջ սոմատիկ բաղադրատարրերի փոխհարաբերակցության կիրառումը,
3. վտանգավորության գործոնը՝ պայմանավորված բազում անկառավարելի գիտական հետազոտությունների անկանխատեսելիությամբ և ռիսկով<sup>1</sup>:

Որպես բիոէթիկական իրավունքի օրինակ կարող է ծառայել որոշ երկրներում կլոնավորման արգելքը, որն իրենից ներկայացնում է իրավական նորմերի ամբողջություն, որոնք պայմանավորված են բարոյական տեսակետներով՝ կապված տվյալ ոլորտում կենսաբանական հետազոտությունների անորոշության հետ:

Այս ոլորտում կատարված ուսումնասիրությունների շարքում մեծ հեղինակություն է վայելում իրավաբանական գիտությունների դոկտոր, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատավոր Ա. Ի. Կովլերի «Իրավունքի անտրոպոլոգիա» աշխատությունը<sup>2</sup>:

Պայմանավորված մարդու «սոմատիկ» իրավունքների ամրապնդմամբ և զարգացմամբ, այսինքն՝ այնպիսի իրավունքների, որոնք մարդուն հնարավորություն են տալիս տնօրինել սեփական մարմինը, հայտնվեցին մի շարք հարցեր, որոնք կապված են այդ իրավունքների և մարդու կյանքի իրավունքի հարաբերակցության հետ: Մասնավորապես՝ հատուկ հետաքրքրություն են ներկայացնում մարդու կյանքի իրավունքի ծագման և դադարման պահի հետ կապված հարցերը:

Նախ հարկ է անդրադառնալ բիոէթիկայում այնպիսի բանավիճախին թեմաների, ինչպիսիք են հղիության արհեստական ընդհատումն ու մինչ ծնվելը կյանքի իրավունքի գոյությունը: Ժամանակակից աշխարհում տեղի ունեցող զարգացումները հատկապես բժշկության, զենետիկայի և կենսաբժշկության ոլորտներում նոր մոտեցումներ են առաջ քաշում և ստիպում են այլ կերպ մայել մարդու կյանքի քրեաիրավական պաշտպանության սկզբի հարցին: Այսինքն՝ երբ է սկսվում մարդու կյանքի իրավունքը և որ պահից է այն ենթարկվում քրեաիրավական պաշտպանության: Այս հարցերը ոչ միայն շարունակում են պահպանել իրենց ակտուալությունը, այլև ձեռք

<sup>1</sup> Репин В. С., Новые биотехногенные реальности в медицине XXI века: место и роль биоэтики // Медицина и право. Материалы конференции, М., 1999, с. 85.

<sup>2</sup> Ковлер А. И., Антропология права, М., 2002, с. 456.

են բերում կարևորություն: Այս թեմայի շրջանակներում անհրաժեշտ է տարբերակել «մարդկային կյանքի սկիզբ», «մարդու կյանքի իրավունքի ծագման պահ» և «մարդու կյանքի իրավունքի քրեաիրավական պաշտպանության սկիզբ» հասկացությունները:

Կենսաբանության տեսանկյունից մարդկային էակի կյանքի ցիկլը ներառում է երկու ժամանակահատված՝ 1. արգանդային, 2. արտարգանդային: Բժշկության մեջ մոր մարդկային օրգանիզմի ձևավորման սկիզբը համարվում է բեղմնավորման պահը, որը սկիզբ է դնում մարդու ներարգանդային ձևավորմանը, այն դեպքում, երբ նրա արգանդային կյանքի սկիզբը հաշվարկվում է լրիվ վիժեցման կամ մոր օրգանիզմից մանկան հեռացման պահից, երբ երեխան սկսում է դրսևորել կյանքի համար կարևոր նշանակություն ունեցող ֆունկցիաներ՝ բնորոշ ինքնուրույն մարդկային օրգանիզմին (թոքային շնչառություն՝ զուգորդված առաջին ներշնչմամբ և ճիչով): Այսպիսով՝ կենսաբանության տեսանկյունից էմբրիոնը համարվում է մարդկային էակ<sup>1</sup>:

Էմբրիոն (հուն. embryo) ասելով ընդունված է հասկանալ կենդանի օրգանիզմ զարգացման վաղ փուլում<sup>2</sup>: Հաճախ «էմբրիոն» և «սաղմ» տերմինները նույնացվում են. դրանք դիտվում են որպես հոմանիշներ: Ներարգանդային զարգացման ութերորդ շաբաթից հետո մարդկային էմբրիոնը (սաղմը) կոչվում է պտուղ<sup>3</sup>:

Կյանքի իրավունքի ծագման հետ կապված տեսության մեջ զոյություն ունեն հետևյալ մոտեցումները՝ բացարձակ, չափավոր և ազատական<sup>4</sup>:

Բացարձակ մոտեցման կողմնակիցները սաղմնավորումը, այսինքն՝ էմբրիոնին, դիտում են որպես մարդկային էակ, որն իրենից մեծ արժեք է ներկայացնում և հետևաբար ունի կյանքի իրավունք: Այս մոտեցման կողմնակիցները դեմ են առհասարակ հղիության արհեստական ընդհատմանը (աբորտին):

Երկրորդ մոտեցման կողմնակիցները գտնում են, որ էմբրիոնը չի կարող համարվել անհատ և հետևաբար, այն չունի այնքան մեծ կարևորություն, որպեսզի ունենա կյանքի իրավունք և հետևաբար այն կարիք չունի հատուկ պաշտպանության:

Այս մոտեցման կողմնակիցները գտնում են, որ էմբրիոնը ունի էական, բայց ոչ բացարձակ արժեք:

Այս մոտեցման կողմնակիցներ են հանդիսանում Մեծ Բրիտանիայի դատավորները, որոնք փորձում են էմբրիոնին տալ անհատի ստատուս: Սրա պատճառը այն է, որ վերջիններս ցանկանում են պատասխանատվություն նախատեսել էմբրիոնին անզգուշությամբ վնաս պատճառելու համար:

Չափավոր մոտեցման կողմնակիցների մի մասը կարծում է, որ էմբրիոնը ունի կյանքի իրավունք, որոշակի զարգացման աստիճանի հասնելուց հետո, իսկ մյուս մասը կարծում է, որ կյանքի իրավունքը ծագում է կենսունակությունից հետո:

Պաշտոնապես մարդու կյանքի ծագման պահը ՀՀ օրենսդրությամբ ամրագրված չէ, ի տարբերություն մարդու կյանքի ավարտի պահի, որն ամրագրված է «Մարդուն օրգաններ և (կամ) հյուսվածքներ փոխպատվաստելու մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածում, որի համաձայն մարդու մահվան փաստը որոշվում է նրա ուղեղի մահով. մահվան մասին եզրակացությունը տրվում է հինգ ընդունելով ողջ ուղեղի անդառնալի մահվան արձանագրումը (ուղեղի մահ) որը որոշվում է ՀՀ առողջապահության նախարարության կողմից հաստատված ընթացակարգերին համապատասխան (ՀՄՊ): Այլ կերպ ասած՝ ուղեղի մահը համարժեք է մարդու մահվան:

Ելնելով վերոգրյալից կարելի ասել, որ իրավաբանորեն մարդու կյանքը նրա ուղեղի կյանքն է, և մարդկային ուղեղի կյանքի սկիզբը նշանակում է մարդու կյանքի

<sup>1</sup> Haring B., Medical ethics, St. Paul, Slough, 1972.

<sup>2</sup> “Окефордская иллюстрированная энциклопедия”, М., 1999, с. 388-389.

<sup>3</sup> “Медицинская энциклопедия”, М., 1993, с. 322.

<sup>4</sup> Маленна М. Н., О праве на жизнь // Государство и право, 1992, N 12, с. 51.

սկիզբ: Հետևաբար, իրավական տեսանկյունից մարդու կյանքի սկիզբը այս ձևակերպմամբ ճիշտ կլինի կապել ուղեղի հյուսվածքների ձևավորման հետ (գլխուղեղի ծնվելու հետ), որը պտուղը դարձնում է կենսունակ: Իսկ դա տեղի է ունենում դեռևս մայրական արգանդում երեխայի ծնվելուց շատ առաջ (հղիության 5-րդ ամսում՝ 23-24 շաբաթական):

Բժշկական գրականության մեջ կան դեպքեր, երբ այդ ժամկետում ծնված երեխաները կենդանի են մնացել: Այդ ժամանակահատվածում պտղի վարքը նույնպես հիմքեր է տալիս նրան մարդ համարելու և իզուր չէ, որ 22 շաբաթական և ավելի հղիության արհեստական ընդհատումը թույլատրելի է որոշակի պայմանների առկայության դեպքում:

Այսպիսով, իրավական տեսանկյունից կարելի է եզրակացնել, որ մարդու կյանքի սկիզբը հաշվարկվում է մարդկային ուղեղի «ծնվելու» պահից, իսկ ավելի կոնկրետ պտղի ներարգանդային զարգացման 23-24 շաբաթական դառնալու պահից:

Ինչպես արդեն նշեցինք, մարդու կյանքի իրավունքի ծագման պահը ուղղակիորեն ամրագրված չէ ՀՀ օրենսդրության մեջ, սակայն ՀՀ Սահմանադրության 15-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի կյանքի իրավունք: «Յուրաքանչյուր ոք» տերմինը կարելի է մեկնաբանել լայն առումով՝ դրա տակ հասկանալով նաև դեռևս չծնված երեխային: Այսպիսով, ՀՀ օրենսդրության ձևակերպումից կարելի է ասել, որ կյանքի իրավունքը սկսվում է մինչև երեխայի ծնվելը: Բայց օրենսդրական երաշխիքներ, առավել ևս, քրեաիրավական պաշտպանություն դրա համար նախատեսված չէ:

Ի տարբերություն ՀՀ Սահմանադրության ՌԴ Սահմանադրությունը կյանքի իրավունքի ծագման պահը շատ ավելի է նեղացնում: Մասնավորապես, ՌԴ Սահմանադրության համաձայն մարդու հիմնարար իրավունքներն ու ազատությունները անօտարելի են և յուրաքանչյուրին պատկանում են ծնվելու պահից<sup>1</sup>:

Կյանքի իրավունքի ծագման պահի հետ կապված բուրրովին այլ մոտեցումներ են դրսևորում Սլովակիայի և Չեխիայի Սահմանադրությունները: Մասնավորապես, վերջիններիս համապատասխանաբար 15-րդ և 6-րդ հոդվածների համաձայն՝ «Յուրաքանչյուրն ունի կյանքի իրավունք: Մարդկային կյանքը արժանի է պաշտպանության դեռևս ծնվելուց առաջ»: Անդորայի Սահմանադրությունը հռչակում է կյանքի իրավունքը և ամբողջությամբ պաշտպանում է այն տարբեր փուլերում:

Դեռևս չծնված երեխայի կյանքի իրավունքի բաղկացուցիչ մաս դիտարկվում է նաև աբորտի իրավունքը: Այս հարցի շուրջ նույնպես պետությունների մոտեցումները տարբեր են: Մասնավորապես, Իռլանդիայի Սահմանադրությունը հռչակում է, որ պետությունը ճանաչում է դեռևս չծնված երեխայի կյանքի իրավունքը. աբորտն արգելվում է: Աբորտի արգելք պարունակում են նաև Մադագասկարի, Ջամբիայի, Լեհաստանի և Մալթայի սահմանադրությունները<sup>2</sup>:

Համաշխարհային իրավաբանական գրականության մեջ տարածված է այն կարծիքը, որ մարդու հիմնարար իրավունքներն ու ազատությունները նրան են պատկանում ծնվելու պահից: Այս մոտեցումը բազմաթիվ պետություններում, այդ թվում և Հայաստանում, որպես այդպիսին, համդիսանում է աբորտի օրինականացման իրավական հիմք: Համաձայն նման մոտեցման կյանքի իրավունքը, որպես մարդու հիմնարար բնական իրավունք ծագում է ոչ թե բեղմնավորման, այլ ծննդյան պահից սկսած, ինչը միանգամայն համապատասխանում է ժամանակակից իրավական համակարգերի տառին և ոգուն, որոնք հիմնված են «բնական իրավունքի» տեսության վրա: Միաժամանակ որքան էլ, որ պարադոքսալ է, նման մոտեցումը ոչ ամբողջությամբ է համապատասխանում միջազգային իրավունքի մի շարք նորմերի: Ամենից առաջ անհրաժեշտ է ուշադրություն դարձնել «երեխայի իրավունքների

<sup>1</sup> Баглай М. В., Конституционное право Российской Федерации, М., 1998.

<sup>2</sup> Конституции государств Европы в 3 т., т. 1, М., 2001.

մասին» կոնվենցիայի պրեամբուլային, որն ընդունվել է 1989 թ. նոյեմբերի 20-ին ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի բանաձևով, համաձայն որի՝ կոնվենցիայի մասնակից պետությունները, այդ թվում և Հայաստանը, հաշվի են առնում, որ «երեխան, պայմանավորված իր ֆիզիկական և մտավոր ոչ բավարար հասունությամբ, համապատասխան իրավական պաշտպանության կարիք ունի, ինչպես մինչև ծնունդը, այնպես էլ դրանից հետո»: Բացի այս, կոնվենցիայի 1-ին հոդվածի համաձայն. «Երեխա է համարվում ցանկացած մարդկային էակ, մինչև իր 19 տարեկան հասակի հասնելը»<sup>1</sup>, այսինքն՝ դրանով չի սահմանվում այն սկզբնական պահը, որից հետո մարդկային էակը ճանաչվում է երեխա:

Մեջբերված հոդվածի իմաստից բխում է, որ երեխա է հանդիսանում ոչ միայն ծնված մարդկային էակը, այլև դեռևս լույս աշխարհ չեկած, մայրական արգանդում գտնվող սաղմը: Սրա հաստատումը կարելի է գտնել նաև հայաստանյան օրենսդրության մեջ: Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1190-րդ հոդվածի առաջին կետի, ըստ կտակի և ըստ օրենքի ժառանգներ կարող են հանդիսանալ. «... ժառանգատուի կենդանության ժամանակ սաղմնավորված և ժառանգությունը բացելուց հետո կենդանի ծնված քաղաքացիները»: Սրանից հետևում է, որ մեր օրենսդրությունը ևս պաշտպանում է մարդկային սաղմի շահերը՝ համարելով նրան քաղաքացի, երեխա, այլ ոչ թե ինքնուրույն գոյությունից զուրկ, մայրական օրգանիզմի մաս:

Հինք ընդունելով վերոշարադրյալը՝ կարելի է եզրակացնել, որ մարդկային սաղմը ևս համարվում է երեխա, այսինքն՝ մարդ (այլ կերպ ասած՝ իրավունքի սուբյեկտ) և օգտվում է մարդու կյանքի սահմանադրական իրավունքից:

Գերմանիայի Դաշնային Հանրապետության քրեական օրենսդրության 219-րդ հոդվածում նշվում էր. «Կինը պետք է գիտակցի, որ դեռ չծնված մարդը, հղիության ցանկացած փուլում կյանքի ինքնուրույն իրավունք ունի, ուստի հղիության ընդհատումը իրավական հասարակարգերում թույլատրվում է միայն բացառիկ դեպքերում»: Սրանից կարելի է եզրակացնել, որ գերմանական քրեական օրենսդրությունը աբորտը, բացառությամբ բացառիկ դեպքերի, հավասարեցնում էր սպանության<sup>2</sup>:

Ներկայումս բացակայում է մարդկային էմբրիոնի իրավական կարգավիճակի վերաբերյալ միասնական մոտեցումը: Ընդհարման կենտրոնում է գտնվում մարդու քաղաքացիական իրավունակության ծագման պահի վերևաբերյալ հարցը: Խնդիրն այն է, որ դեռևս Հին Հռոմեական իրավունքում գոյություն են ունեցել իրավանորմեր, որոնք վկայում են, որ քաղաքացիական իրավունակությունը մարդու մոտ առաջանում է դեռևս նրա ծնվելուց առաջ: Խոսքը գնում է «12 աղյուսակների օրենքի» մասին, որի նորմերից մեկում նախատեսված է, որ երեխան, որը ծնվել է ժառանգատու հոր մահից հետո համարվում է ժառանգ, ուստի կարող է հիշատակվել կտակում: Հետագայում նմանատիպ դրույթ ամրագրվեց նաև Գայուսի ինստիտուցիաներում և Հուստինիանոսի դիգեստներում: Բացի այս Հուլիոս Վելի օրենքի համաձայն, մարդկային սաղմի պաշտպանության տեսանկյունից նրան՝ հղի մոր խնդրանքով, պետք է նշանակվեր խնամակալ, ով լիազորված էր իրականացնել այն ունեցվածքի կառավարումը, որը կենդանի ծնվելու դեպքում պետք է ժառանգեր սաղմը<sup>3</sup>: Պատահական չէ, որ 2-3-րդ դարերի միջակայքում հռոմեական իրավաբան Տերտուլիանը նշում էր. «Նա, ով դառնալու է մարդ, արդեն մարդ է»<sup>4</sup>:

Մեջբերված լատինական իրավական աղբյուրների նորմերը հետագայում յուրացվել են ռոմանագերմանական իրավական համակարգերի կողմից: Այսպես՝ Գերմանիայի քաղաքացիական օրենսգրքի 1923(2)-ի համաձայն. «Անձը, որ չի

<sup>1</sup> Конвенция о защите прав человека и достоинства человеческого существа в связи с использованием достижений биологии и медицины: Конвенция о правах человека и биомедицине. Овьедо, 4 апреля. 1997 г. // Международные акты о правах человека: Сборник документов. М., 2002. С. 745.

<sup>2</sup> ԳԳՀ Քրեական օրենսգրքը. քարգմանությունը գերմաներենից, Մոսկվա, 2002, էջ 127-131:

<sup>3</sup> Дождев Д. В., Римское частное право, Учебник для вузов, Москва, 1996.

<sup>4</sup> Тертулиан, Апология 8-ой век, 8/Богословские труды, Москва, 1984, с. 180.

ծնվել կտակի բացման պահին, սակայն արդեն սաղմնավորված է եղել մինչև ժառանգատուի մահը, համարվում է ծնված մինչև կտակի բացվելը»: Իսկ համաձայն 1777(2). «Չայրը կարող է խնամակալ նշանակել այն երեխային, որը պետք է ծնվի իր մահից հետո, եթե նա լիազորված է նման գործողություն անել մինչև իր մահը երեխայի ծնվելու դեպքում»<sup>1</sup>:

Ֆրանսիայի քաղաքացիական օրենսգրքի 725-րդ հոդվածի համաձայն՝ ժառանգ կարող են լինել միայն այն անձինք, որոնք գոյություն ունեն կտակի բացման պահին: Միաժամանակ «գոյություն ունենալ» եզրույթն ավելի լայն է, քան «կենդանի լինել» հասկացությունը և հնարավորություն է տալիս ժառանգման իրավունք տալ սաղմնավորված, բայց դեռևս չծնված երեխային<sup>2</sup>: Իրավաբանների մեծամասնության համաձայն նշված դրույթները մարդկային սաղմին ամենևին էլ չեն տալիս ինքնուրույն սուբյեկտիվ իրավունքներ. «...մարդը դառնում է իրավունքի ինքնուրույն սուբյեկտ միայն այն դեպքում, երբ ծնվում է, ի դեպ՝ ողջ»: Միաժամանակ իրավագետների մի մասն էլ գտնում է, որ սաղմնավորված երեխան (նասցիտուրուսը) օժտված է պայմանական քաղաքացիական իրավունակությամբ, իսկ ոմանք էլ կարծում են, թե օրենքը պարզապես պաշտպանում է նասցիտուրուսի «ապագա» իրավունքները՝ ճանաչելով նրան իրավասուբյեկտություն ունեցող անձ<sup>3</sup>: Ինչ վերաբերում է 1-ին տեսակետին, ապա այն ունի բավական խոր պատմական արմատներ: Իսկապես, դեռևս հռոմեական իրավունքի աղբյուրներում հանդիպում են նորմեր, որոնք հավասարեցնում են սաղմնավորված երեխային իրավունքի արդեն ծնված սուբյեկտների հետ՝ 2 պայմանի առկայության դեպքում: Նախ սաղմնավորված երեխան պետք է ողջ ծնվի, բացի այս սաղմի քաղաքացիական իրավասուբյեկտության ճանաչումը պետք է համապատասխանի նրա շահերին<sup>4</sup>: Լատինական իրավունքի աղբյուրների դրույթները շոշափելի ազդեցություն են ունեցել քաղաքացիական իրավունքի գիտության մեջ «պայմանական իրավասուբյեկտության» տեսության ստեղծման վրա<sup>5</sup>: Այս տեսությունն իր հիմնավորումն է ստացել մի շարք արտասահմանյան պետությունների օրենսդրություններում: Չամաձայն Յունգարիայի 1977 թ. քաղաքացիական օրենսդրության, մարդը, եթե նա ծնվել է ողջ, համարվում է իրավունակ սաղմնավորման պահից: Իսպանիայի 1889 թ. քաղաքացիական օրենսդրության համաձայն «Ֆիզիկական անձի քաղաքացիական իրավասուբյեկտությունը ծագում է ծնվելու պահից, միաժամանակ սաղմնավորված երեխան դիտարկվում է որպես ծնված, եթե նա ծնվել է ողջ, ունի մարդկային մարմին և ապրել է առնվազն 24 ժամ մայրական օրգանիզմից անջատվելուց հետո»:

Չեխոսլովակիայի 1964 թ. քաղաքացիական օրենսգրքում նշված էր, որ իրավասուբյեկտությամբ օժտված է նաև սաղմնավորված երեխան, եթե նա ծնվել է ողջ: Այս դրույթը նույնությամբ պահպանվեց նաև հետագայում՝ Չեխոսլովակիայի վարչատարածքային և քաղաքական բաժանումից հետո, համապատասխանաբար Չեխիայում և Սլովակիայում<sup>6</sup>:

Վերը նշված օրինակներում դեռևս չծնված երեխային ճանաչելով ժառանգ,

<sup>1</sup> Германское право, ч. 1, Москва, 1996, с. 378-408.

<sup>2</sup> Основные институты гражданского права зарубежных стран (сравнительно-правовое исследование), под ред. В. В. Залеского, Москва, 2000, с. 494.

<sup>3</sup> Նման դիրքորոշում են արտահայտում, մասնավորապես, ռուս մինչեղավոխական շրջանի իրավաբանները, օրինակ՝ Մ. Վ. Խվոստովը, ինչպես նաև քաղաքացիական իրավունքի առավել ուշ շրջանի հետազոտողները, որոնց թվում են Վ. Ի Սերբրովսկին, Յ. Վ. Վեբերսը (Серебровский В. И., Труды по наследственному и страховому праву, Москва, 1997, Хвостов В. М., Система римского права, Москва 1996, с. 92, Веберс Я. Р., Правосубъектность граждан в советском гражданском праве и семейном праве, Рига, 1975, с. 184).

<sup>4</sup> Веберс Я. Р., Правосубъектность граждан в советском гражданском праве и семейном праве, с. 184

<sup>5</sup> Вагачума С., Аридзуми Т., Гражданское право Японии, Москва, 1993, с. 44, Enneccerus L. Ripp Th., Wolf M., Lehrburch des burgerluchen Rechts, Allgemeiner Teil. Bd. 1, Abt. 1., Marburg, 1928, p 188.

<sup>6</sup> Маленна М. Н., Личные неимущественные права граждан: понятие, осуществление, защита, Москва, 2000, с. 59.

օրենսդիրը նկատի է ունենում, որ ժառանգման իրավունքը նրա մոտ առաջանում է կենդանի ծնվելու դեպքում: Միաժամանակ ծագած իրավունքը գործում է հետադարձ ուժով<sup>1</sup>:

Արտասահմանյան օրենսդրություններում հանդիպում է նաև հակառակ մոտեցումը մարդկային էմբրիոնի կյանքի իրավունքի պաշտպանության հարցին: Այսպես՝ Նիդերլանդներում, դեռ չծնված երեխան համարվում է լույս աշխարհ եկած, եթե այդ կանխավարկածը համապատասխանում է նրա շահերին<sup>2</sup>:

Վերջին ժամանակաշրջանում առավել մեծ տարածում է գտել այն դիրքորոշումը համաձայն որի՝ մարդկային կյանքի սկիզբը կապվում է նրա սաղմնավորման հետ մոր արգանդում: Այսպիսի տեսակետներ են պաշտպանում մասնավորապես Մոսկվայի համալսարանի կենսաբանության ֆակուլտետի էմբրիոնոլոգիայի վարիչ, կենսաբանական գիտությունների թեկնածու, դոկտոր, պրոֆեսոր Վ. Ա. Գալիչենկովի և ամբիոնի պրոֆեսոր Դ. Վ. Պոպովի կողմից<sup>3</sup>: Առավել կատեգորիկ է մի շարք արտասահմանյան մասնագետների տեսակետը, որի համաձայն՝ արտոն իրենից ներկայացնում է ոչ թե հղիության անվտանգ ընդհատում, այլ կանխամտածված սպանություն<sup>4</sup>: Ժամանակակից բժշկության եզրահանգումները արբորտի՝ որպես սպանության ճանաչման վերաբերյալ, համապատասխանում են կրոնական, մասնավորապես քրիստոնեական մոտեցումներին: Քրիստոնեական եկեղեցու կանոնական դիրքորոշման ձևավորման գործում մեծ դեր է խաղացել Կոստանդնուպոլսի 692 թ. դիրքորոշումն առ այն, որ տարբերություն չկա, թե որևէ մեկը սպանում է մեծ մարդու, թե այն էակին, որը դեռևս գտնվում է իր ձևավորման ամենասկզբնական փուլում<sup>5</sup>:

Ինչ վերաբերում է կյանքի իրավունքի քրեաիրավական պաշտպանությանը, պետք է նշել, որ քրեական իրավունքում տարածված և ընդունված է այն մոտեցումը, որ երբ մայրական արգանդում պտղին վնաս է պատճառվում կամ նրան «սպանում են», դա համարվում է հղիության ընդհատում (արբորտ) կամ ծայրահեղ դեպքում մոր առողջության դեմ ուղղված հանցագործություն: Փաստորեն, մարդու կյանքի քրեաիրավական պաշտպանության սկիզբը չի համընկնում ոչ կյանքի ծագման կենսաբանական և ոչ էլ իրավաբանական պահի հետ. այն առաջանում է շատ ավելի ուշ՝ երեխայի ծնվելուց հետո: Ընդ որում, նկատի է ունեցվում, որ երեխան պետք է ծնվի կենդանի և մայրական օրգանիզմից լրիվ անջատ լինի:

Հղիության արհեստական ընդհատման հետ կապված ՌԴ օրենսդրությունում կատարվել են որոշակի փոփոխություններ: Մասնավորապես, հղիության ընդհատման սոցիալական և բժշկական ցուցանիշները ենթարկվել են որոշակի սահմանափակումների:

Կարծում ենք, որ 22 շաբաթականից ավելի ժամկետում հղիության դիտավորյալ ընդհատումը առանց համապատասխան օրենքով սահմանված բժշկական ցուցանիշների պետք է որակել ոչ թե որպես ապօրինի արբորտ, այլ պտղի սպանություն: Ավելի ճիշտ՝ ոտնձգություն մարդկային պտղի դեմ, որի հետևանքով ընդհատվել է պտղի կյանքը:

Ներկայումս այս ուղղությամբ փոխվում են նաև Եվրոպական դատարանի մոտեցումները: Մասնավորապես, եթե նախկինում Եվրոպական դատարանը արբորտը

<sup>1</sup> Хвостов В. М., Система римского права, с. 93-94.

<sup>2</sup> Голландская правовая культура, Отв. ред. В. В. Бойцов, Москва, 1998, с. 147.

<sup>3</sup> Համաձայն էմբրիոնոլոգիայի վարիչ, կենսաբանական գիտությունների թեկնածու, դոկտոր-պրոֆեսոր Դ. Վ. Պոպովի 1993 թ. սեպտեմբերի 3-ի եզրակացության կենսաբանության ոլորտում իրականացվող ներկայիս հետազոտությունները վկայում են այն մասին, որ «մարդու՝ որպես կենսաբանական անհատի, կյանքը սկսվում է արական և իգական սեռական բջիջների միաձուլման և միասնական միջուկի, որն ընդգրկում է անկրկնելի գենետիկական ինֆորմացիա ձևավորման պահից»:

<sup>4</sup> Судо Ж., Биологический статус человеческого эмбриона (доклад для медиков), Семья и биоэтика, с. 139.

<sup>5</sup> Силуянов И. В., Этика врачевания: современная медицина и православие, Москва, 2001, с. 103.

համարում էր կնոջ, այսինքն՝ մոր իրավունքը, ապա այժմ Եվրոպական դատարանը ճանաչում է դեռևս չծնված երեխայի կյանքի իրավունքը և արորտը դիտում է որպես կյանքի իրավունքի բացառություն<sup>1</sup>:

Հայաստանի Հանրապետությունը 2001 թ. դառնալով Եվրախորհրդի անդամ, վավերացնելով Եվրոպական կոնվենցիան, պարտավորվել է հետևել վերջինիս դրույթներին և Եվրոպական դատարանի նախադեպային որոշումներին: Հետևաբար կյանքի իրավունքի ծագման հետ կապված խնդիրները ծառայած են նաև մեր պետության առջև և դրանք հրատապ լուծումներ են պահանջում, ինչը կարող է իրականացվել օրենսդրական, ինչու չէ նաև սահմանադրական համապատասխան փոփոխությունների միջոցով:

Гаяне Демирчян

## МОМЕНТ ВОЗНИКНОВЕНИЯ ПРАВА НА ЖИЗНЬ И ПРАВОВОЙ СТАТУС ЧЕЛОВЕЧЕСКОГО ПЛОДА (ЭМБРИОНА)

Главный вопрос заключается во времени, когда право на жизнь вступает в силу и с каторого момента необходимо ее охранять? В силу физиологических и биологических особенностей рассматриваемой проблемы данный вопрос требует уточнения.

Для гарантии права на жизнь недостаточно его закрепление в нормативных правовых актах. Для действительной охраны жизни человека на всем ее протяжении необходимо, чтобы момент возникновения права на жизнь, указанный в правовых нормах, совпадал с фактическим началом жизни человека.

Страсбургский суд впервые подтвердил право на жизнь нерожденного ребенка, пояснив, что аборт может быть лишь исключением из права, а не правом как таковым.

Gayane Demirchyan

## THE ORIGINS OF THE RIGHT TO LIFE AND THE LEGAL STATUS OF A HUMAN FOETUS

The main question is when the right to life will be enforced and to what extent. This issue requires clarification, because of its physiological and leilological features.

In order to guarantee of the right to life it is not enough to consolidate it through regular legal acts. For the real protection of human life it is necessary to study its origins.

The Strasbourg court was the first institution to confirm the right to life of the unborn child, explaining that abortion may be the only exception to the law, not the law as such.

It is known that the investigator is a key player in the criminal proceedings, which is the only entity that has capabilities of investigation. Due to this fact, investigators have been given procedural autonomy, at the same time providing a range of mechanisms to restrain it, which include prosecutorial supervision.

---

<sup>1</sup> Report by Working Party on the Protection of the Human Embryo and Fetus. Steering committee on bioethics of Council of Europe. Strasbourg, 19 June 2003 [Электронный ресурс]. Режим доступа: <http://www.coe.int/Bioethics>.